Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 835 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում գիտնականներին և գիտական խմբերին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հայ օգնության ֆոնդ (630 Սեքոնդ Ավենյու, Նյու-Յորք, ԱՄՆ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Մ. Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ 02517115) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գործող գիտական և կրթական հիմնարկներ<br>Բնագավառը՝ գիտական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 61,648,000 դրամ |
| 7. | Բարեգործությունն ստացողը | Հայաստանի Հանրապետության գիտական և կրթական հիմնարկներ, 28 գիտական խմբեր (ընդհանուր՝ 112 գիտնականներ) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝<br>1) մրցույթի հայտարարում կայքերում, թերթերում և ֆեյսբուքյան էջերում.<br>2) Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի մրցույթի անցկացման կազմկոմիտեի կողմից մասնակիցների հայտերի ընդունում.<br>3) հետազոտական խորհրդի կողմից հայտերի գնահատում և հաղթողների ընտրություն.<br>4) ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից գիտական խմբերի հետ դրամաշնորհային պայմանագրերի կնքում և դրամաշնորհի առաջին մասի վճարում:<br><br>2. 2023 թվականի հունիսի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել՝<br>1) աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով ՀՕՖ-ի մոնիթորինգի հանձնաժողովի այցելություններ գիտական խմբերին.<br>2) կազմկոմիտեի կողմից միջանկյալ հաշվետվությունների ընդունում.<br>3) դրամաշնորհի երկրորդ մասի վճարում (հոկտեմբեր 2023).<br>4) կազմկոմիտեի կողմից ամփոփիչ հաշվետվությունների ընդունում:<br><br>3. Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 61,648,000 դրամ, որից՝<br>1) դրամաշնորհի 56,000,000 դրամ.<br>2) ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2,100,000 դրամ.<br>3) ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48,000 դրամ.<br>4) կոմունալ ծախսեր 2,300,000 դրամ.<br>5) գրասենյակային պիտույքներ 1,200,000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Բնական գազի ձեռքբերում՝ 1,600,000 դրամ չափով:<br>2. Ջրամատակարարման ծառայության ձեռքբերում՝ 700,000 դրամի չափով։<br>3. Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ձեռքբերում՝ 48,000 դրամի չափով։<br>4. Գրասենյակային պիտույքների ձեռքբերում՝ 1,200,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 1. Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է, այդ թվում 5,648,000 դրամ՝ ընդհանուր արժողության 9.2%-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է՝<br><br>1) Ծրագրի ղեկավարի աշխատավարձ՝ 2,100,000 դրամ.<br>2) Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն՝ 48,000 դրամ.<br>3) Կոմունալ ծախսեր՝ 2,300,000 դրամ.<br>4) Գրասենյակային պիտույքներ՝ 1,200,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

24.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ